

–Անհոգ եղիր. տասնհինգ օրն անգամ մը կգրեմ եւ լուրեր կու տամ քեզի:

–Ուրեմն հասցեն տամ քեզի, որ նամակներս սխալմամբ ուրիշին ձեռքը չանցնին:

–Հարկ չկայ. *Մասիսի* կյանձնեմ նամակները:

–Այդ ի՞նչ ըսել է. *Մասիսը* նամակներու տո՞ւփ է:

–Հիմա ամեն մարդ իւր մէկ բարեկամին գրած նամակն *Մասիսի* կու տայ եւ պատասխան ալ անոր մէջ կկարդայ: Անցեալները չգիտեմ ո՞ր ընկերութեան ատենադպիր տիկին *** Ս. Պատրիարքին նամակ մը գրած էր *Մասիսին* մէջ եւ պատասխանը քանի մը օր ետքը յիշեալ թերթին մէջ առած էր: Դարձեալ ուրիշ մէկն իւր մէկ բարեկամին գրած մտերմական մէկ նամակն *Մասիսի* միջոցաւ հրատարակած ու պատասխանն նոյն լրագրին մէջ կարդացած էր: Ո՞ր մէկը համբեմ...

–Շատ աղէկ. *Մասիսի* միջոցաւ գրէ նամակներդ եւ պատասխանները հոս կարդա:

–Ասանկով թղթատարի ծախքէն ալ կխալսինք:

–Մանաւանդ թէ մեր նամակները չեն կորսուիր:

Կեցցէ՛ թղթատար *Մասիսն*... եւ տակաւին ըսողներ ալ կան, թէ *Մասիս* հասարակութեան օգտակար ծառայութիւններ չմատուցաներ...:

13 Նոյեմբեր

Ուրախառիթ լուր մը...

Պէշիքթաշի մէջ խումբ մը երիտասարդներ ընկերութիւն մը կազմած են իրենց մէջ, նպատակ ունենալով մէկ դահեկան տուգանք վճարել ամեն անգամ՝ որ իրենց խօսակցութեանը մէջ օտար բառ խառնեն:

Այս տուգանքէն գոյանալիք հասոյթն ազգօգուտ ընկերութիւններէն մէկուն պիտի նուիրեն:

Հապա ի՞նչ տուգանք առնելու է այն հայերէն, որք իրենց խօսակցութեանը մէջ երբեմն հայերէն բառեր կխառնեն եւ շատ անգամ հայերէն բառ բնաւ չեն խառներ:

Այս միջոցն շատ լաւ է ազգային լեզուն կոկելու համար, եւ եթէ այսպիսի ընկերութիւն մ'ալ ազգային խմբագիրները կազմեն՝ ընկերու-